ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Բ. Գ. ԹՈՌԼԱՔՅԱՆ (Սոչի)

XVII դարի երկրորդ կեսին բուն Համշենից գաղթած հայերը, սփռվելով Տրապիզոնի նահանգում՝ Սյուրմենեից մինչև Սամսոն ընկած տարածքում, հիմնականում ապաստանել են մեծ ու փոքր քարանձավներում, դարավոր ծառերի փչակներում, կամ էլ հապճեպ կառուցված հյուղակներում։ Ըստ ավանդությունների, Տրապիզոնից 40—50 կմ հարավ-արևմուտք ընկած Աղաջապատ վիճակի Մալա գյուղի մոտ գտնվող Դևորոն ապառաժի հսկայական քարայրում տարիներով ապրել են շրջակա Մալա, Սալախոր, Լաղանա, Կապարոն և այլ գյուղերի բնակիչների նախնիները, որոնք Համշենից գաղթելով ու դեգերելով անտառներում, գտել են այդ անառիկ քարայրը։

Դեռևս XIX դարի վերջերին Համշենահայ շինականները տարբեր նպատակներով կառուցում էին հյուղակներ (բալաղան)։ Հյուղակի հիմքում մի ուղղությամբ դրվում էին վերին ծայրերը երկճղի երկու-երեք սյուներ, որոնք մեկը մյուսից 1,5—2 մ հեռավորությամբ ամրացվում էին գետնին։ Սյուների վրա հորիզոնական դիրքով դրված գերանին երեք կողմից հենում էին ձողեր, որոնց վրա նոսրորեն հյուսում էին բարակ ճղներ, որպեսզի ծածկը չթափվի, և ներքևից վերև շերտ-շերտ ծածկում իմփոով (պտեր), եղեգով կամ զանազան այլ բույսերով։ Հյուղակի առջևից բաց էին թողնում ելումուտի տեղ։ Շատ դեպքերում ձողերի փոխարեն շարում էին իրար կիպ կպած տախտակներ, որոնց արանքները մամռապատում էին և ամբողջ հյուղակը ծածկում հողով։ Այդպիսի բալաղաներ շինում էին խոտհունձներում ու արոտավայրերում (մեզրե)։ Ժամանակի ընթացքում անտառներում հարմար բնակավայրեր ընտրելով, ոմանք ինքնագլուխ, շատերը տեղական հողատերերից կապալով հողամասեր վերցնելով կառուցում էին համեմատաբար հարմարավետ, հիմնավոր բնակարաններ։ Դրանք միաշֆանի (մուտք) շիբեր ու խզեկոճ (գերանակապ) խրճիթներ էին։ Համշենցիք շիբ էին անվանում բնակելի և օժանդակ բոլոր տեսակի շինվածքները, որոնք հյուսում էին լաշենու, կաղնու, հոնի և այլ ծառերի ու թփերի բարակ ճիպոտներից (ջինե)։ Շիթե խրճիթների կմախքը պատրաստում էին 8—12 սմ հաստության, կեղևահան արած սյուներից՝ դրանք 20—25 սմ հեռավորությամբ հողի մեջ ամրացնելով։ Տուն-խրճիթի չորս պատերը ջինեով հյուսում ու երկու կողմից կավացեխով ծեփում էին։ Տանիքը (ծածուկ) ծածկելու համար օգտագործում էին կացնով «հանած» տախտակներ կամ իմփո, լուս (կնլուն) և երկար ու սլինդ տերևներով այլ բույսեր։ Տանիքի գագաթին թողնում էին փոքր անցք, որը միաժամանակ ծառայում էր որպես լուսամուտ և ծխնելույզ։ Դուռը պատրաստում էին տախտակից։ Խրճիթի կենտրոնում բուրակն էր (օջախ)։

Հետզհետե ժամանակավոր խրճիթների փոխարեն սկսում են շինել երկհարկանի փայտաշեն տներ, իսկ ավելի ուշ, այն ընտանիքները, որոնք հնարավորություն են ստանում սեփական տնտեսություն հիմնելու, իրավունք ու հնարավորություն են ստանում նաև քարաշեն և կիսաքարաշեն տներ կառուցելու։ Ոչ սեփականատեր գյուղացիները՝ մաբաքաները (կապալատուները) քարաշեն տուն շինելու իրավունք չունեին։

Երկրի բարեխառն կլիմայով ու շինանյութերի (փայտեղեն) առատությամբ կարելի է բացատրել, որ Համշենցիք գետնափոր ու հողածածկ տներ չեն կառուցել։ Առանց բացառության, բոլոր բնակելի և օժանդակ շենքերը կառուցվում էին հողի մակերեսին։ Համշենցիների տները հիմնականում երկհարկանի էին։ Առաջին հարկը գրեթե ամբողջությամբ գրավում էր գոմը։ Երկրորդ հարկի գլխավոր բաժանմունքներն էին ճողատուն-բուրկնոցը, ճայաթը (նախասրահը),

մառոնը (մառան), մեծ օղան (մեծ սենյակը), կամ սիսաֆարի օղան (սենյակ) և սուֆան (պատշգամբ)։ Միջին մեծության տների լայնքը 7—9 մ էր, երկայնքը 10—13 մ, առաջին հարկի (գոմի) բարձրությունը՝ 1,7—1,8, երկրորդ հարկինը՝ 2,5—3 մ։

Քարաշեն տան հիմքի խորությունը սովորաբար 50—70 սմ էին անում։ Թույլ, փխրուն հողերում նստվածք տալուց, փլուզումից տունն ապահովելու նպատակով հիմքի ակոսի տակ փռում էին լաստենու (յայֆեի, բծխի) տափակեցրած, հաստ ու երկար բներ, վրան լցնում ավազախառն կրաշաղախ ու թողնում, որ լիցքը լավ չորանա-պնդանա, որից հետո միայն սկսում էին պատերի շարվածքը։ Պատերի հաստությունը սովորաբար լինում էր 50—70 սմ։ Պատերը բարձրացնում էին երկշարք, հնարավորության սահմաններում՝ արտաքին կողմից սրբատաշ քարերով։ Կային նաև տներ, որոնց միայն անկյունաքարերն էին սրբատաշ. շաղախի (ջոռ) համար օգտագործում էին պարարտ կավահողը։

Ավարտելով առաջին հարկի պատերը, տեղադրում էին երկրորդ հարկի հատակի (կամ առաջին հարկի ծածկի) գլխավոր գերանները։ Հողատունն ու մառանը մեծ սենյակից ու հայաթից բաժանող գծով հորիզոնական գցում էին շուրջ 30—40 սմ հաստությամբ, պինդ ծառաբնից (խոզկացնու, մաշմուրգի) մայր գերանը (անամիրիշ)։ Տան լայնքով, մայր գերանի վրայով հորիզոնաբար գցում էին շուրջ 20—30 սմ հաստությամբ գերաններ (հիմքի գերան, թեմել միրիշի)։ Գլխավոր գերանները տեղադրել-ամրացնելուց հետո շարունակում էին պատերի հետագա շարվածքը, բացի պատշգամբից, որն մեծ մասամբ տախտակով էին պատում։ Երկրորդ հարկի շարվածքը սկսելուց առաջ բոլոր պատերի արտաքին շոջագծով տեղադրում էին 15—20 սմ լայնքով, 1—1,5 սմ հաստությամբ ամուր տախտակներ (խաթել), որպեսզի պատերի ճնշումը հիմքին ու առաջին հարկի պատերին համաչափ բաշխվի։ Երկրորդ հարկի պատերը ներսի կողմից 10—12 սմ նեղ էին անում, որով պակասեցվում էր ճնշումը հիմքի վրա։ Պատերը կանգնեցնելիս դռների ու պատուհանների համար թողնված բացվածքներում տեղադրում էին դռների բարավորները՝ վերնամասերի գերանները (տեռնդի, դռան գլեխը)։

Քարի շարվածքն ավարտելուց հետո անցնում էին տան փայտեղեն կմախքի կառուցմանը։ Առաջին հերթին բարձրացնում էին պատշգամբինը, հետո գցում առաստաղի գերանները, սրանց վրա ամրացնում տանիքի կմախքը։ Վերջացնելով պատշգամբի կմախքը, նախ տան չորս պատերին փռում («նստեցնում») էին կապի գերանները, որոնց ծայրերը կտրելով ագուցում էին իրար ու փայտե սեպերով (շիվի) ամրացնում։ Այնուհետև, առաստաղի կենտրոնից՝ պատից պատ ձգում էին ամենաամրակուռ գերանը (պապա գերան), որի երկու «գլուխները» (ծայրերը) երկաթյա ճարմանդներով ամրացնում էին ճակատի կապի գերաններին։ Պապա գերանի երկու կողմից, իրար զուգահեռ, իրարից մեկ մետր հեռավորությամբ գցում էին առաստաղի մնացած գերանները, որոնք փայտե սեպերով ամրացնում էին կապի գերաններին։

Տանիքները մեծ մասամբ քառաթեք (չորս լանջ) էին շինում։ Երկթեք տանիքով կառուցում էին տնամերձ փոքր շենքերն ու փոքր տները։ Քառաթեք տանիքի հիմքը պապա գերանն էր, որի վրա իրարից 3—4 մ հեռավորությամբ ամրացնում էին 1,5—2 մ բարձրությամբ տանիքի պատվանդանները, որոնք կոչվում էին պապա տիրեխ (սյուն)։ Այդ սյուների գագաթներին ամրացրած գերանը կոչվում էր տանիքի of կամ գագաթի գերան (թեփե ofի)։ Օքի ծայրերին մկրատաձև բացված զույգ հենակ-գերաններ էին դնում, որոնք միացվում էին տանիքի ճակատի համապատասխան անկյուններին, կապի գերաններին։ Այս տանիքները կոչվում էին մկրատ, մկրատավոր (մաքասլի) կամ չորս ուսանի (օմուզ)։ Ուսերի միացումով տանիքի 2 ճակատներում միաժամանակ ստացվում էր ուղղանկյուն եռանկյունի, որի գագաթը օքի ծայրերն էին։ Օքի երկու հակադիր կողերը շեղանկյուն քառանկյունաձև էին։ Օքի երկու կողմից, թեք գծով կապի գերաններին խփում են 3—4 մարդակ (մերթեղ, հեծան)։ Ուսերից խփված նույնպիսի հեծաններին, որոնցից յուրաքանչյուրը նախորդից կարճ էր

լինում, մարղակի ձագ (յավրի) են ասում։ Մառդակների վրա իրար զուգահեռ հորիզոնական դիրքով գամում էին 6—8 սմ լայնությամբ, 2—3 սմ հաստությամբ հղկված ձողեր (ջամլամա, ծպեղ). սրանց վրա գամում կամ դարսում էին ծածուկը։ Ծպեղների հեռավորությունը և հաստությունը կախված էր ծածուկի նյութից և ծավալից։ Երկթեք տանիքը (սեմեր ծածուկ, համետաձև ծածկ) ունենում էր պապա սյուների վրա ամրացրած, տանիքի ամբողջ երկայնքով ձգված մեկ հատ օք, հավասար մարդակներով, առանց ուսերի։

Տանիքի կենտրոնում, տունը լուսավորելու և օջախի ծուխը դուրս գալու համար թողնում էին 60—80 $սմ^2$ անցք (բաճա), որն անհրաժեշտության դեպքում ծածկելու համար սարքում էին հատուկ հարմարանք։ Ինչպես երկթեք, այնպես էլ քառաթեք ծածկը շինում էին տանիքից համեմատաբար ավելի ծավալուն, որպեսզի անձրևաջուրը պատերը չթրջի. պատերից դուրս ընկած ծածկի հավելյալ այդ մասը կազմում էր տանիքի քիվը (սաչակ):

Քարաշեն տները մեծ մասամբ ծածկում էին տեղական կղմինդրով (կիրեմիտ) ու կուվարով (խարտումա)։ Չքավոր ընտանիքները բավարարվում էին ավելի հասարակ ու էժան ծածկանյութով՝ փեծ ու տախտակով, որը պատրաստում էին սեփական ուժերով։

Տանիքը կուվարով ծածկում էին հորիզոնական շարքերով։ Առաջին շարքը դարսում են քիվատեղի վրայով, երկրորդ շարքը նստեցնում առաջինի վրա ու այսպես հաջորդաբար։ Երկու շարքերի միացման գծով, ավելի հաստատուն լինելու համար, մեխերի գլխիկների տակից փաթաթում-ձիգ էին տալիս նուրբ մետաղալար։ Ծածուկի երկու կողերի միացման կետերի արանքները փակում էին եռանկյունաձև՝ իրար խփած զույգ տախտակներով (ծածուկի սեմեր՝ համետ)։

Փեծե ծածուկը շարում էին կուվարների պես (առանց գամելու), երկու շարքերի միացման գծի վրա դնելով ծանր փայտեր կամ քարեր։

Տախտակե ծածուկի համար նախապատրաստում էին համաչափ հաստությամբ և լայնությամբ տախտակներ, որոնց մի երեսի երկու եզրի ամբողջ երկայնքով, եզրերից 2 սմ դեպի ներս «հենում էին» ակոսներ։ Տախտակները՝ ակոսները դեպի վեր, ուղղահայաց, մի անկյունից սկսում էին մեխել հեծաններին (ճապլամա), մեկը մյուսից այնքան հեռավորությամբ, որպեսզի երկրորդ շարքը մեխելիս ծածկվի խփված տախտակների արանքում մնացած տարածությունը։ Այսպիսով, սկզբի տախտակը լինում էր ամենակարճը, հետզհետե երկարում էր մինչև տանիքի գագաթը, այնուհետև աստիճանաբար կարճանալով հասնում ուսի վերջը։

XIX դարի երկրորդ կեսից սկսած տների ներքին միջնորմները (թարապա)-հիմնականում սկսում են կառուցել սղոցած, երկու կողմից հղկված տախտակներից, որոնք փոխարինելու եկան կացինով ճեղքված հաստ ու կոպիտ տախտակե կամ դերանակապ միջնորմներին։ Որպեսզի տախտակները չծռվեն, դրանց շփակողերի վրա իրար դեմ շաղափով անցքեր (թուրիծ) էին բացում, յուրաքանչյուրի մեջ խրում սեպ (չիվի) ու փայտե թակիչներով կիպ ամրացնում։ Տախտակների ծայրերը զետեղում էին դեմ-դիմաց պատերին ամրացված ակոսավոր (չոմփուտ, ծոնա) սյուների մեջ։ Միջնորմի տախտակների հաստությունը լինում էր շուրջ 30—40 մմ։

Համշենահայոց բնորոշ տները՝ քարակերտ թե փայտաշեն, ունեին դրսի մուտքի երկու դուռ։ Երկու դուռ ուներ նաև մառանը. մեկը բացվում էր դեպի բուրակնոց, երկրորդը՝ դեպի սուֆա։ Երկու դռնով էր մեծ սենյակը, մեկը սուֆայի, մյուսը հայաթի կողմից։ Մեկական դուռ ունեին սուֆայի ու հայաթի սենյակները։ Առանձին դռնով բուրկնոցը միացած էր հայաթին։ Տան առաջին հարկը՝ գոմը, ունենում էր երկու-երեք դուռ։ Հողատան ու գոմի մուտքի դռները շինում էին ամուր, 45—50 մմ հաստությամբ տախտակներից (դա անհրաժեշտ էր պաշտպանողական նկատառումներով)։ Ներքին դռները սովորական տախտակներից էին։ Բոլոր դռները միափեղկ էին։ Երկաթե կողպեքներով գուռը արտասովոր երևույթ էր։ Մուտքի դռները գիշերը գոցում էին ամրակուռ, 6—7 սմ

հաստությամբ քառակուսի պարզունակով (սողնակ), որը հագցնում էին դռան երկու սյուների վրա գամած ճարմանդներին։ Քարե պատը շարելիս, դռան երեսու կողմից պատերի մեջ պարզունակ անցկացնելու համար թողնում էին նաև համապատասխան անցքեր։ Կային, թեև հազվադեպ, բայց հասարակ մանդալով (փակաղակ) կամ, ինչպես ասում էին, ախեռով փակվող դռներ։ Այս հարմարանքի անունով շատերն օգտագործում էին «ախել, մանդալել, խաչընել»

Համշենահայերի բնակելի տուն

արտահայտությունները (դուռը փակելու իմաստով)։ Դռսից դուռը բացելու համար ախի լեզվակին կապում էին թել ու փոքր անցքով հանում դռան դրսի կողմը։ Քարակերտ տների դռները մեծ մասամբ կախ էին տալիս սյունին ամրացրած ճարմանդներից (մենթեշե) և կամ կողքի երկու ծայրերին խրած գրոզաներով (ծխնի) հագցնում էին մի կողմից դռան շեմին մյուսով բարավորին ամրացրած երկաթե բույներին։ Հասարակ շենքերի կամ տան ներքին միջնորմների դռների ծխնիները սովորաբար պինդ փայտից (տոսախ, խոզկաղին) էին պատրաստում։

Տան հատակի տախտակների միայն երեսի կողն ու շփակողերն էին հղկում (տախտակների հաստությունը՝ 30—50 մմ, հատակի գերանների հեռավորությունը միմյանցից՝ 60—80 սմ)։ Մառանի ու սուֆայի հատակները մեծ մասամբ շինում էին ամենապարզ ու հեշտ եղանակով՝ տախտակները կողքկողքի սեղմ՝ տեղադրելով մեխում էին հատակի հիմնագերաններին։ Որակյալ, հաստատուն հատակ ունենալու համար տախտակների շփաշերտերին շոնփուր կամ ծոնտ էին հանում՝ տախտակները կողերի կենտրոնից ամբողջ երկարությամբ ակոսում (ծոնտ հանում) ու իրար էին «կապում» ծոնտերի մեջ համա-

պատասխան տախտակ (ծագ. յավրի, շիրիշակ) հագցնելով։ Ամրացնում էին նաև տախտակների հակադիր եզրերը ակոսելով ու իրար միացնելով։

Սենյակի առաստաղի համար օգտագործում էին 20—25 մմ հաստությամբ տախտակներ, որոնք առաստաղին խփում էին դարձյալ ակոսելով ու իրար հագցնելով և կամ երկու տախտակների արանքների վրա ձագ (շիրիշակ) խփելով. ինչպես հատակի, այնպես էլ առաստաղի եզրերին տախտակների վրայից գամում էին նեղ ցողաքանակ (պլինտուս)։

Գոմի առաստաղը շինում էին հաստ ու խոնավադիմացկուն տախտակներից կամ 15—20 սմ տրամագիծ ունեցող կեղևահան արած գերաններից, վրան կապահողից շաղախ (ջոռ) էին լցնում ու լավ լոկում (սվաղում)։ Հողաշերտից վեր՝ գերանների վրա խփում էին երկրորդ հարկի՝ մառանի ու սենյակի հատակի տախտակները։ Գոմի առաստաղը փաստորեն երկրորդ հարկի հատակն էր։

Համշենահայերը ցխինք (թավոն, ձեղուն) էին անվանում տան առաստաղի և եկեղեցի կամ քառաթեք տանիքի միջև ընկած փակ տարածությունը, որը մի յուրահատուկ շտեմարան էր, ուր ձմռանը պահում էին հեշտությամբ ցրտահարվող ու խոնավությանը չդիմացող մթերքները՝ սոխ, սխտոր, դդում, չիր և ավելորդ իրեր ու կահույք։ Ցխինք բարձրանում էին հողատնից՝ շարժական եռաբանով։

Համշենահայոց մեջ լայնորեն տարածված էին նաև կիսաքարաշեն և փայտաշեն տներն ու օժանդակ այլ կառույցները։ Կիսաքարաշեն տունը զուտ քարաշեն տնից տարբերվում էր նրանով, որ այդպիսի տան միայն ներքնահարկի արտաքին պատերն էին քարից, իսկ վերնահարկն ամբողջությամբ փայտից էր (գերան կամ տախտակ). կային այնպիսի կիսաքարաշեն տներ, որոնց նաև առատան արտաքին պատերն էին քարից շինված։

Փայտաշեն տները տախտակից ու խզեկոճ գերաններից էին։

Խզեկոն (գերանակապ) տներ։ Խզեկոճ կոչվում էին այն կառուցվածքները, որոնք շինվում էին խզված կոճղերով (գերան). գերանի վրա կացնով, սղոցով կտրած-հանած բացվածքին ասում էին խեզ (խեզվածք)։ Այստեղից էլ՝ խզեկոճ (խզված կոճղ) արտահայտիչ բառ ու խզեկոճ կառուցվածքների (տուն, սխոռ, կորոպ) անվանումները։

Խզեկոճ, ինչպես և հետագայում տախտակաշեն տների հիմքերը ամրացնում էին հողի մեջ տեղադրած ծառաբներից կտրած կոճղերի՝ հիմք-պատվանդանների վրա, որոնք հնարավորության դեպքում կառուցվում էին նաև քարից, որպեսզի հողի վրա պառկեցրած գերանները հեշտությամբ չփտեն։ Հիմքերի վրա ձգում էին նաև տան երկու հակադիր կողմերի հիմնագերանները, որոնց նատատեղը տաշում, տափակեցնում էին, որպեսզի հաստատուն լինեն։ Այդ գերանների ծայրերի մոտ ու միջնորմների ուղղությամբ խգում, հանում էին խեզվածների վրա հագցնում էին մյուս երկու կողմերի գերանների խգված տեղերը և ամրացնում։ Այսպես հաջորդաբար գերանները իրար կապելով բարձրացնում էին ցանկացած չափով։ Տան պատերը շարելուն զուգընթաց տեղադրում էին նաև դռան շրջանակները. գերանների ծայրերը տաշելով ագուցում էին դռան բների վրա տկոսած չոփուրների մեջ (ծոնտ)։ Սկզբնական շրջանում համշենցիների բնակարանները մեծ մասամբ եղել են մի հարկանի խզեկոճ իրճիթներն ու մասամբ էլ՝ չիթե կառուցվածքները։ Տարիների ընթացքում դրանց փոխարինելու եկան երկհարկանի գերանակապ տները։ Նախնական խզեկոճ տների միջնորմները նույնպես գերանակապ էին։ Հետագայում, նոր շինված խզեկոճ տների միջնորմները հիմնականում տախտակով էին շինում։ Խզեկոճ տների սենյակներին վայելուչ տեսք տալու նպատակով շատերը նախորդ գերանների ներսի երեսները տաշում-տափակացնում ու այդպես էին տեղադրում իրենց տեղերը։ Խզեկոճ տների հատակներն ու առաստաղը սկզբնական շրջանում սարքում էին կացնով ճեղքած և տաշած տախտակներով, իսկ հետագայում՝ սղոցած տախտակներով։ 1900-ական թթ. համշենահայերը գերանակապ տներ արդեն սակավ էին կառուցում, որը բացատրվում էր առաջին տերթին անտառանյութի պակասությամբ։

Բուրկրնոց (բուրակնոց) էր կոչվում տան ամենագլխավոր բաժանմունքը՝ աչքը, այն պատճառով, որ այստեղ էր գտնվում տան բուրակը (օջախը)։ Այն կոչում էին նաև օջախնոց (օջախգլուխ) կամ հողատուն (եր-էվի), բուրկրնոցը գրավում էր տան ընդհանուր օգտակար մակերեսի 20—30 տոկոսը։ Բուրկրնոցից բացվում էր երեք դուռ՝ մուտքի, մառանի ու հայաթի։ Բուրկրնոցն ու հայաթը բաժանող միջնորմը քարով էին շարում։ Մառանի մուտքի առջև, ամբողջ



Կորոպ

պատի երկայնքով դրվում էր 20—25 սմ բարձրությամբ, 100—120 սմ լայնքով մշտական թախտը (բարբոն)։ Բաթրոնի մեջտեղում, մառանի մուտքի աջ կամ ձախ կողմում գտնվում էր ախոռն իջնելու համար շինված կափոնիր, որն ուներ բաթրոնի տախտակների հաստությամբ կափարիչ։ Կափոնքից ախոռ իջնում էին մնայուն կամ շարժական ելարանով։ Տան մուտքի կողմում, բաթրոնից 60—70 սմ բարձր, մառանի պատի վրա հաստատվում էր ամանեղենի պահարանը՝ բերեֆը։ Թերեքի տակ գտնված մասը ծառայում էր որպես պատվանդան կաթսաների, ջրի սափորի, կուֆայի համար։ Մյուս ազատ կողմում սարքում են հրեխաների ճաշասեղանը։

Բուրկրնոցում լույսի միակ աղբյուրը առաստաղից բացած երդիկը՝ բաջուն էր, որը ծառայում էր նաև որպես ծխնելույզ։ Օջախը շինում էին հողատան հարավային պատի կենտրոնից 1—1,5 մ հեռու, հողի մեջ, բոլորշի կամ քառանկյունի ձևով, խորությունը շուրջ 15—20 սմ, տրամագիծը՝ 80—100 սմ։ Օջախի հատակն ու կողերը սալարկվում էր։

Հաց թխելու փոր մուտքը մեծ մասամբ բուրկրնոցից էր բացվում։ Երբեմն այն տեղադրվում էր հայաթում կամ բակում, առանձին ծածուկի տակ։ Փոր հնոցի հիմքը, կողերն ու գմբեթը սալարկում էին հրակայուն քարով։

Բուրկրնոցը համշենցիների տան գլխավոր դահլիճն էր, այն միաժամանակ հյուրանոց-ընդունարան, խոհանոց-սեղանատուն էր, մեծ մասամբ նաև՝ ռատիկի-պապիկի ննջարանը, որոնց համար բուրակի կողքին դրվում էր փայտյա հասարակ թախտ։ Այստեղ էին կատարում նաև հարսանեկան տոնախմբությունները, խնջույքներն ու երեխաներին մկրտելը, պսակի արարողությունը։ Բուրկրնոցը նաև սովորական հյուրերի ննջարանն էր։

Հողատան հատակը ամբողջովին հողածածկ էր։ Հողի երեսը 5—6 սմ հաստությամբ կակուղ կավահողի շաղախով էին պատում, որն ամրացնելու համար նաև հարդ էին խառնում և փայտյա թակիչներով հավասար տոփում։ Այդպիսի հատակը չորանալով սալահատակի տեսք ու ամրություն էր ունենում։ Այլ էր այն հողատան պատկերը, որի ներքնահարկը ախոռ էր ունենում. այսինքն հողատունը գրավում էր երկրորդ հարկի մի մասը։ Այդպիսի հողատան

օջախի տակը քարեպատում կամ կոճղապատում էին, մեջը հողով լցնում, ապա վրան կառուցում բուրակը։ Գոմի առաստաղը, որը միաժամանակ հողաստան հասակի պատվանդանն էր դառնում, կառուցում էին հաստ կամ կիսված (ճեղքված) կոճղերից, վրան 15—20 սմ բարձրությամբ հող լցնում, որից հետո՝ կավահողից շաղախ ու տոփտոփում։

Հայաթը (նախասրահը), ամբողջ տան էական բաժանմունքներից մեկը, միջնորմներով բաժանված էր բուրկընոցից ու մեծ սենյակից։ Քարաշեն տան հայաթը ամբողջովին փակ պատերի մեջ էր ու մուտքերից մեկը բացվում էր փողոցի վրա։ Հայաթը հիմնականում օգտագործում էին վառելափայտ, տնային որոշ իրեր, երկրագործական գործիքներ պահելու համար։ Ինչպես վերն ասվեց, մի շարք տներում փուռը տեղադրված էր լինում հայաթում։ Բազմանդամ ընտանիքներում հայաթը կիսելով դարձնում էին սենյակ-ննջարան, թողնելով փոքր միջանցք-նախասրահ՝ մուտքի մոտ ու հողատան դռների ուղղությամբ։

Մառոն (մառան)։ Քարաշեն տան մառանի միայն մի պատն էր քարաներս։ Հողատնից, մեծ սենյակից ու սուֆայից անջատված էր տախտակե պատերով։ Մառանը լուսավորում էին բուրկընոցի կամ սուֆայի դուռը բանալով։ Մակավաթիվ էին այն տները, որոնց մառանը լուսավորվում էր պատի մեջ բացած լուսամուտով։ Մառանը շտեմարան-մթերանոցն էր։ Մեծ մասամբ նրա մի անկյունը հատկացվում էր կաթնեղենին։ Մառանում երկու թոկից կախած ատիտակի վրա դարսում էին թխած հացը։ Հիմնականում այստեղ էր տեղադրվում նաև ջուլհակի ոստայն-դազգահը։ Բազմամարդ ընտանիքներում հաճախ մառանի մի մասը ծառայում էր որպես ննջասենյակ։

Մեծ օդա կամ միսաֆիրի օդա։ Այս սենյակը հիմնականում հատկացվում էր նորապսակներին, սակայն հարգարժան, բարձրաստիճան հյուրեր ընդունելիս նրանք ստիպված էին դիջել իրենց ննջարանը։ Օդան ունենում էր եկեղեցիների պատուհաններ հիշեցնող, պատի մեջ բացված նեղ լուսանցք, այնքան նեղ, որ մարդ չկարողանար մտնել։

Համարյա բոլոր քարակերտ տների մեծ սենյակի մուտքի դռան հարակից անկյունում սարքված էր լինում յուրահատուկ դարան (մախսեն), որը ինքնապաշտպանության նպատակով էր շինված։ Դա հատակից շուրջ մեկ մետր բարձրությամբ քողարկված դոլաբ՝ դարակ էր, որի գաղտնի անցքը հետզհետև նեղանալով աննկատելի բացվում էր մուտքի դռան կողքին։ Մախսենից ազատ, անվտանգ կարելի էր կրակել դռանը մոտեցող թշնամու վրա։ Մի շարք տներում այսպիսի մախսեններ կային նաև գոմի ու տան երկրորդ մուտքի դռան կողքին։ Հյուրասենյակի մուտքի պատի ամբողջ երկայնքով, ինչպես հողաստանը, բաթրոն էր կառուցված լինում, զանազան իրեր դնելու համար։

Սուֆա (պատշգամբ)։ Սա տան փայտակերտ պատշգամբն էր, մառանի ու մեծ սենյակի անմիջական շարունակությունը։ Շատերը սուֆայի մի կողմում կառուցում էին փակ սարքին (ամբար)՝ կաղին, ընդեղեն, չիր և այլ մթերքներ պահելու համար։ Բազմաթիվ ընտանիքներում սուֆայի մի կողմում փոքր ննջասենյակ էին սարքում, որը և կոչվում էր սուֆայի սենյակ։ Սուֆան օգտագործում էին նաև որպես ձմեռվա փեթականոց։ Որպես տան ամենահով տեղը, շատերը կաթի տաշտերն այստեղ էին կախում։ Ձմեռվա կաթնեղենի պաշարը՝ յուղի, պանրի տակառները, թթվի կարասները նույնպես հիմնականում այստեղ էին պահում։ Կային տներ, որոնց սուֆայում փոքր լվացարան էր սարքած լինում, որից մեծ մասամբ օգտվում էին հատկապես ձմեռն ու վատ եղանակներին։ Սուֆայի հատակը նաև ապահով ծածկ էր ախոռի առջև. նրա տակ դարսում էին անասունների առօրյա կերը, ցերեկները (անձրև եղանակին) կովերն էին կթում և այլն։

Գում (գոմ)։ Ինչպես վերը նշվեց, համշենցիների տների առաջին հարկն ամբողջությամբ գրավում էր անասունների գումը կամ ախոռը։ Քառաշեն տների ախոռի չորս պատն էլ, բնականաբար, քարից էր։ Հարավային պատը կից էր հողատանը՝ բուրկընոցին ու հայաթին։ Գոմը տախտակե միջնապատերով բաժանում էին 2-3 մասի՝ կովերի, հորթերի ու գրաստի համար։ Ոմանց մոտ

հորթերի ախոռն առանձին մուտք չուներ, այլ ներսից փոքր դռնակով բաժանված էր կովերի բաժանմունքից։ Գոմի հատակը շինում էին թեթևակի երկթեք տախտակամած, որի կենտրոնի ակոսով (սնգղա) զոմեզը (անասունների մեզը) հոսում էր աղբանոցը (կուդիանոցը)։ Անասուններին կերակրելու համար գոմի երկու կողմի ամբողջ երկայնքով, հատակից քիչ բարձր տաշտաձև մսուրն էր դետեղված։ Յուրաքանչյուր կովի կապն ամրացնելու համար մսուրքի եզրերին անցքեր (թոլեց) էին հանված։

Ձիերի մսուրքը գետնից մոտ մեկ մետր բարձր էին սարքում։ Ախոռներն առանց լուսամուտի էին, կովերին կերակրելիս կամ կթելիս ախոռի դուռը բաց էին թողնում։ Ախոռի առջևում՝ սուֆայի ուղղությունից քիչ հեռու 40—50 սմ խորությամբ ընդարձակ փոս-կուդիանոցն էին փորում, որտեղ կուտակում էին սամաղրը։

Թանատց։ Ինչպես ամենուր, այնպես էլ համշենահայոց մեջ թուրք կառավարությունը խիստ հետապնդում էր զենք ունեցող հայերին։ Ամենաչնչին պատրվակով հայերի տները ենթարկվում էին անակնկալ ու մանրազնին խուզարկության։ Ուստի հանգամանքն ստիպում էր յուրաքանչյուրին ինքնապաշտպանության նպատակով ձեռք բերած հրազենն ու սառը զենքերը այնպիսի հնարագիտությամբ թաքցնել, որ թե՛ խուզարկուների աչքից հեռու լիներ և թե՛ անհրաժեշտության դեպքում շտապ կարողանային օգտվել։ Զենքի ամենամեծ թաքստոցը, որ կարելի էր 4-5 հրացան տեղավորել, անհրաժեշտ պարագաներով, գտնվում էր փոի դռան տակ և փակվում էր մյուս քարերի նման հղկված քարերով։ Երկրորդը մառանի գերանների միջև ընկած աղատ տարածությունն էր, որի վրա խփած էր հատակի տախտակը։ Այդպիսիք շինվում էին նաև ախոռում։

1900-ական թթ., հատկապես 1908 թ. երիտթուրքերի ղեկավարությամբ Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո, համշենցի գյուղացիք, հավատալով, որ վերջապես իրենք էլ դառնալու են իրավազոր քաղաքացիներ, սկսում են ձեռնամուխ լինել նորաձև բարեկարգ տների կառուցման։ Նորակերտ տներում տեղադրում էին լայնանիստ, ապակեպատ պատուհաններ, կիսախավար հոդատունը դարձնելով լուսավոր դահլիճ՝ ծեփված ու կրով սպիտակեցրած պատերով։ Այդպիսի բարեկեցիկ տներ առաջին հերթին կառուցվեցին քաղաքամերձ կամ ամառանոցային գյուղերում (Զեֆանոզ, Կրոմիլա և այլն)։

Կորոպ։ Սա համշենցուն անհրաժեշտ երկրորդ շինությունն էր։ Չէր կարելի պատկերացնել համշենցի շինականի հարուստ թե աղքատ որևէ տնտեսություն առանց կորոպի։ Այդ շինությունը մթերանոց էր, որտեղ պահում էին չորացրած եգիպտացորենը, կաղինը, ընդեղենն ու չիրը։ Կորոպը 2—2,5 մ բարձրությամբ չորս զույգ սյուների վրա սարքած փայտաշեն ամբար էր։ Միջին մեծության կորոպի երկայնքը 10 մ, լայնքը 2—5 մ էր։ Սյուները թաղված էին ուղղակի գետնի մեջ կամ հենված քարե պատվանդանների վրա։ Սյան հողի մեջ գտնվող մասը կրակի վրա բավարար չափով թրծում էին, որպեսզի այն չուտ չփտի։ Սյուների վերնամասի եզրերը կտրելով, կենտրոնում թողնում էին 8 սմ հաստությամբ, 30—40 սմ երկայնքով քառակուսի ցից։ Այդ ցցերին հագցրնում են 50—70 սմ տրամագծով, 10—15 սմ հաստությամբ լիսեռաձև կլոր կոճղ (թեֆեռ)։ Կոճղից վերև սյան ցցի ծայրը մոտ 10 սմ ապատ էին թողնում՝ շենքի հատակի գերաններին միացնելու համար։ Կոճղը միաժամանակ խոչընդոտում էր մկների կորոպ բարձրանալուն։ Ոմանք կրկնակի ապահովության համար թեքեռի շրջագծին թիթեղյա շրջանակ են գամում։ Եթե կորոպները առանց թեքեռի էին շինված, սյուների վրա շուրջանակի մկան փուշ (փշատերև թուփ) էին կապում։

Կատարելագործված կորոպների պատերը տաշած, 30—40 մմ հաստությամբ տախտակներից էին։ Սյուների ցցերի վրա ագուցում էին երկու գլխավոր գերանները, ապա մեկը մյուսի վրա շարում ամրացնում տախտակները։ Որպեսզի պատերը չծռվեն, չգոգավորվեն, երկու տախտակների շփաշերտերին բորիծ (անցք) էին բացում ու սեպերով կիպ միացնում իրար։

Պատերի վրա թողնում էին 2—3 ցանցկեն օդանցք-լուսամուտ։ Պատերի վրա կառուցում էին տանիքի հիմնամասը և կորոպը ծածկում այնպես, որպեսզի օդ խաղար և գով լիներ։ Կորոպի հատակը սարքում էին տաշած և իրարից 2—3 մմ հեռավորությամբ հիմնագերաններին գամած քառանկյուն տախտակաձողերով, արանքներն անհրաժեշտ էին օդափոխության համար։ Հաճախ կորոպի հատակը պատում էին լաշենու, կաղնու կամ հոնի մատղաշ ու ճկուն ճիպոտներից (ջինի) հյուսած ծածելով։



Ծխախոտի չորանոց

Կորոպը միջնորմով բաժանում էին երկու հիմնական մասերի՝ շտեմարան ու պատշգամբ (սուֆա)։ Պատշգամբից բացվում էր շտեմարանի (բուն կորոպի) դուռը։ Պատշգամբի մի կողմում, շտեմարանին կից կառուցում էին ամբարը, որը հիմնականում ընդեղենի և չորացրած կաղինի համար էր։ Ամբարը գրավում էր մոտավորապես 4—6 մ² տարածություն։ Սրա տախտակե դռնակով մուտքը շինում էին ցածր ու փոքր, այնպես, որ կարելի լիներ կռանալով մտնել։ Մեծ կորոպի ամբարի կողքին կառուցում էին փոքր ննջասենյակ (կոբոպի օդա)։ Բազմամարդ ընտանիքներում այդ սենյակն օգտագործում էին որպես սովորական ննջարան, որի դուռը բացվում էր պատշգամբիս և ուներ տախտակե փոքր լուսամուտ՝ առանց ապակու։ Կորոպ բարձրանում էին աստիճան-ելարանով, որը լինում էր նաև շարժական։ Ամառվա շոգերին, քանի դեռ կաղինի բերքահավաքը չէր վերջացել և կորոպը մթերքներով ծանրաբեռնված չէր, այն ծառայում էր որպես ջահելների ամառային ննջարան։

Կորոպները կառուցում էին ամրակուռ և խոնավադիմացկուն ծառաբնեռից՝ հիմքի սյուներն ու գերանները՝ խոզկաղնու և մաշմուրգի (շագանակենու), տախտակները՝ գլխավորապես շագանակենու փուստից։ Ծածուկը պատրաստում էին կղմինդրից, կուվարից (խարտումա), երբեմն էլ փեծից։ Կորոպի պատշգամբի ազատ եզրերն ամրացվում էին բազրիքներով կամ տախտակե ցածր վանդակապատով։

Կատարելագործված կորոպները տարածված էին այն շրջաններում, որոնց բնակչությունը հիմնականում սեփական հողամաս ուներ։ Մարաբաները, որոնց նույն հողամասում երկար ապրելը կախված էր աղաների քմահաճույքից, քարակերտ տներ շինելու իրավունք չունեին, ուստի իրենց տնամերձ կառույցներն էլ ստիպված սարքում էին պարզ ու հասարակ։ Այդպիսիք էին խզեկոճ, չիթ ու հասարակ փայտեղենից պատրաստված կորոպները։ Խզեկոճ կորոպ կառուցելու տեխնիկան նույնն էր, ինչ որ տախտակից շինվածինը, այն տարբերու-

թյամբ միայն, որ տախտակի փոխարեն պատերը խզված գերաններից էին։ Շատերը սյուների գագաթը թեքեռ անցկացնելու փոխարեն մկան փշով էին փաթաթում։ Տանիքները ծածկում էին փեծով, տախտակով, իմփոով կամ եղեգնով՝ ինչն էժան ու հեշտ էր ճարվում։

Եգիպտացորենի չիթերի կառուցվածքը նույնն էր, ինչ որ սովորական չիթի կառուցվածքինը, միայն սա հաստատվում էր բարձր սյուների վրա, ինչպես կորոպը և ուներ երկու՝ վերի և վարի դռնակ։ Վերևի դռնակից լցնում, իսկ ցածինից հանում էին եգիպտացորենը։ Օգտագործվում էին նաև մի դռնակով չիթեր։ Չիթերի ծածուկն էլ անում էին հասարակ ու էժան ծածկանյութերից՝ եղեգ, իմփռ, փեծ, տախտակ։ Մկների մուտքն արգելելու նպատակով սյուներին մկան փուշ էին կապում։

Համշենցիները նման կորոպ-ամբարները օգտագործում են նաև մեր ժամանակներում՝ իրենց նոր հանգրվաններում (Աբխազական ԻՍՍՀ, Կրասնոդարի երկրամաս և այլուր)։

Մարագ էին կոչում այն շինությունը, որի մեջ անասունների կերն ու տակը փռելիքն էին ամբարում։ Հակահրդեհային նկատառումներով մարագները կառուցում էին բնակարանից 50—100 մ և ավելի հեռավորությամբ։ Կային ինչպես երկհարկանի, այնպես էլ հասարակ միհարկանի մարագներ։ Երկհարկանի մարագների ու երկհարկանի տների հիմնակմախքը իրարից չէր տարբերվում։ Մարագի առաջին հարկի հատակն առանց տախտակամածի էր, միայն պատերի դրսի կողմից, անձրևի ջուրը մարագի տակ չհոսելու համար առուներ էին քաշում։ Երկրորդ հարկի հատակն ու առաստաղը սարքում էին հասարակ, իրարից քիչ հեռու, շատ անգամ չգամված տախտակներից այնպես, որ կերը չթափվեր։ Պատերը նույնպես հասարակ, նոսր խփած տախտակներից էին շինում։ Որպես տանիքի ծածկույթ օգտագործում էին փեծը, տախտակը, կավարը, իմփոը, հաղվագեպ՝ կղմինդրը։ Մարագի առաջին հարկը լցնում էին անոառից, կաղնուտից ավլած-հավաքած շալով (շոր տերև)՝ անասունների տակը փռելու համար։ Երկրորդ հարկում, առաստաղի վրա ամբարում էին անասնակերը։

Միահարկ կամ չիթ մարագները մեծ մասամբ ճիպոտներից հյուսված, բոլորշի կառույցներ էին՝ նույնպես ջինեպատ դռնակով։ Այդպիսիք շատերը կառուցում էին հատկապես հեռավոր անտառներում, կաղնուտներում՝ անասնակեր կամ փռելիք (տերև) պահելու համար։ Չիթերը վերևից ծածկում էին դրլխավորապես եգիպտացորենի ծեղով կամ իմփռով։

Այն ընտանիքները, որոնք կորոպում, սուֆայում ամբար չունեին կամ ունեցածը չէր բավարարում, տան մոտ սարքում էին առանձին ամբար, որը կառուցում էին գետնից 25—40 սմ բարձր քարե պասվանդանի (բարձ, յազբուղ) վրա։ Պատերը մեծ մասամբ հղկված տախտակից էին, մուտքը (դուռը) առաստաղի մոտ՝ պինդ կափարիչով, տանիքը՝ երկթեք, կղմինդրով, կուվարով կամ փեծով ծածկված։ Ամբարը դյուրավառ նյութերով (իմփռ, ծեղ) չէին ծածկում։ Այն հիմնականում կաղին և ընդեղեն մթերելու համար էր։

Մինչև սովետական իշխանության հաստատվելը, Ռուսաստանում ապաստանած համշենցիների միայն մի չնչին մասը, ընդունելով ռուսական հպատակություն, իրավունք ստացավ սեփական քարաշեն տուն շինել, այգի, պարտեզ ունենալ։ Ռուսաստանում հաստատված համշենցիների կառուցած տներն ու տնամերձ շենքերը ոչնչով չէին տարբերվում հայրենի երկրում իրենց երբեմնի փայտաշեն շենքերից։ Հողատունը, բուրկընոցը իր խղճուկ բաջայով, կիսախավար ու խոնավ խրճիթը՝ ամառ ու ձմեռ ծխացող օջախով, նույն հայաթն ու օդան, մառանն ու սուֆան, գերանակապ կորոպն ու հասարակ չիթը։ Շատերը մարագ բոլորովին չունեին։ Դրան փոխարինում էին խոտի ու ծեղի ցանկապատված դեղերը։

Դրությունը հիմնովին բարեփոխվեց սովետական կարգերի հաստատումից հետո։ Ամեն ընտանիք ձեռնամուխ է լինում իր ուժերով ու պետությունից ստացած վարկով բարեկարգ շենքեր կառուցելուն։

* * *

Նոր տան տեղը որոշելիս ոմանք նախօրոք դիմում էին գրբացներին, վրհուկներին (ջինջի, բախտ աշող) ու միայն նրանց գուշակությունների համաձայն սկսում տան հիմքերը փորել։ Եթե վհուկն ասեր, որ նշված տեղն «անբախտ» է, նոր վայր էին ցույց տալիս ու մինչև գրբաց-վհուկը չասեր որ «բախտավոր» տեղ են ընտրել, տան կառուցումը չէին սկսի։ Տան հիմքի անկյունների տեղը 7—8 օր առաջ քարեր էին դնում և եթե քարերի տակ միջատ (մրջյուն, որդ) կամ որևէ այլ կենդանի էր բույն դրած լինում, ուրեմն տեղը հաջող, «բախտավոր» էր։ Ամենաբախտավոր վայրը մրջյունների հավաքված, բույն դրած տեղն էր համարվում։

Շենքի հիմքի անկյունները 15—20 սմ խորացնելուց հետո, տանտերը փոսերից մեկի մեջ մատաղ էր կտրում ու առանց մատաղի գլուխն անջատելու, բոլոր չորս փոսերի մոտ տանելով՝ անկյունաքարերի տեղում արյուն էր թափում։ Ամեն ընտանիքի մատաղացուն լինում էր իր հնարավորության համապատասխան՝ աքլոր կամ խոյ, երկուսն էլ անպայման սև փետուրով կամ մաղով։ Մատաղի միսը բաժանում էին վարպետներին, հարևաններին ու անպայման մի-մի կտոր տան ընտանիքի բոլոր անդամներին։ Կային ջերմեռանդ մարդիկ, որոնք տան հիմքի տեղը քահանային օրհնել տալուց հետո էին միայն փորել սկսում։

Որպեսզի նորակառույց տանը առատություն լիներ, անկյունաքարերի տակ հնչյուն դրամ (40—80 փարա՝ 8—15) կոպեկ էին դնում, նույնը անում էին նաև տնամերձ շենքեր՝ կորոպ, մարագ և այլն կառուցելիս։ Ունևորների մեջ 5—10 դուրուշ, նույնիսկ մի հնչյուն ոսկի թաղող էր լինում։ Հնչյուն դրամ էին դնում նաև տան հիմքի դերանների տակ։ Որպեսզի տունը չար աչքից հեռու լիներ, կաշվի կտորի մեջ ածուխ, աղ, պղպեղ, սխտոր, «աչքից հուլունք» կապում ու հիմնաքարերի տակ էին թաղում։

Կային հավատացյալներ, որոնք եթե իրենց ապրած տանը հաճախակի դժբախտություն էր պատահում՝ երեխաները փոքր հասակում մահանում էին, գործերը անհաջող էին գնում կամ կովերը, ոչխարները սատկում, դիմում էին «բախտ աշողներին», գրբացներին։ Շատ անդամ այդպիսիները, գուշակների խորհրդով, քանդել են իրենց տունը և ուրիշը կառուցել։

Ջերմեռանդությամբ հավատում ու համոզված էին, որ ամեն տուն իր «Մեր պահապան» օձն ունի։ Նա, իբր, գիշերները շրջում է տան բոլորը, առաստաղում և տեսնում է ինչ է կատարվում ու տունը պահպանում է չարքերից։ «Տան պահապան» օձին սպանելը «մեծ փորձանքի դուռ կբանար» ընտանիքի գլխին։

Նոր տուն կառուցելիս վարպետները տան տանիքի հիմնամասի վերջին մարդակը չխփած, ուրագը ցած էին դնում ու նստում տան կտուրին։ Մինչև տանտիկնոջից նվեր չստանային, նստած տեղից չէին բարձրանում։ Ստանալով նվերը՝ անձեռնոց, շապիկ կամ գուլպա, շնորհակալություն ու բարի մաղթանքներ հայտնելով, խփում էին վերջին մարդակն ու ցած իջնում։

Սովորություն կար, տանիքի հիմնամասը վերջացնելով, երեք օր դադարեցնել աշխատանքը։ Այդ օրերի ընթացքում տանտիրոջ հարևանները, հարազատները, ով ցանկանում էր, գալիս էր շնորհավորելու նորակառույցը, նվերներ էին կախում մարդակներից, ով փող, ուրիշը կտոր, սրբիչ, գուլպա և այլն։ Երեք օր հետո հավաքված նվերները հանձնում էին վարպետներին, որից հետո շարունակում կառուցումը։ Տան հիմնամասը վերջացնելիս վարպետներին նվերներ տալու սովորությունը մինչև այժմ էլ պահպանվել է կովկասյան համշենցիների գյուղերում։ Եթե հին տունը «բախտավոր» էր համարվում, նոր տան օջախը շենացնում՝ վառում էին հին տան օջախից բերած թեժ կրակով, իսկ եթե «անբախտ»՝ կրակը վերցնում էին գյուղի «բախտավոր» համարվող օջախներից, որպեսզի նոր օջախը բախտավոր լիներ։ Նույն ավանդական սովորություններն էին պահպանվել հացի և աղի վերաբերյալ. առաջին աղն ու հացը ուտում էին հին տնից բերածով՝ թե որ «բախտավոր» էր, եթե ոչ՝ բախտավոր տնից էին վերցնում կամ թարմ հաց էին թխում։ Տան մուտքի շեմի վրա ձիու

պայտ խփելը ապանդական պարտադիր սովորություն էր։ Դա անհրաժեշտ էին համարում տան հաջողության ու լիության համար։ Դռան տերնդիի (շեմազլխի գերան) վրա մարալի (եղնիկի), խոյի եղջյուրներ խփելով, հավատում էին, որ տան երիտասարդները օնլուրի (եղնիկ) պես քեսում (արագաշարժ), խոյի նը ման հանդուգն կռառնան։ Բակի մուտքի կողմում ճամփեզրին, ցցերի վրա ձիու, խոզի, այծի գանգ անցկացնելը տունը չար աչքից հեռու պահելու հույսով էր արվում։

Յուրաքանչյուրն իր հնարավորության սահմանում, կերուխումով նշում էր նոր տան կառուցումը։ Հաճախ նոր տան շնորհավորանքի ուրախությունը դառնում էր ամբողջ թաղի, գյուղի տոնախմբության, ցնծության օր։ Հավաքվում էին հարազատներ, գրկից ու բարեկամ, շնորհավորում սանտիրոջը։ Նոր օջախ, նոր ընտանիք կազմողին շնորհավորելու գնացող հարազատներից շատերն ու բարեգութ հարևանները (անկախ նրանից, թե հայրական ունեցվածքից ինչ բաժին է հասել բաժանողին) իրենց աջակցությունն էին ցույց տալիս նորաստեղծ տնտեսության արագ ոտքի կանգնելուն, նվեր բերելով՝ որը հավ կամ մի թուխս իր ճտերով, մյուսը՝ գառնուկ կամ հորթուկ, մեկը փեթակ, կուժ ու գդալ, տան պահապան շնիկ և այլն։ Եթե նոր ընտանիք կազմողը կթան կով չուներ, շատ անգամ նրան ժամանակավոր կթան կով էին տալիս, մինչև հորթուկների մեծանալը։ Նույն կարգերն ու սովորությունները հատկանշական էին նաև վերջին գաղթավայրերում ապրող համշենցիների գյուղերում։

ЖИЛОЙ КОМПЛЕКС АМШЕНСКИХ АРМЯН

Б. Г. ТОРЛАКЬЯН (Сочи)

Резюме

Начиная со второй половины XVII в. армяне-беженцы из коренного Амшена обосновываются в Трапизонской области, на протяжении от Сюрмене до Самсона. Амшенцы не строили домов с покрытой землей крышей или домов типа землянок, что можно объяснить относительно благоприятным климатом и обилием строительного материала (дерево). Все жилые и подсобные помещения строились на поверхности земли. Дома в основном были двухэтажными. Первый этаж почти полностью отводился под помещения для содержания скота. Главными подразделениями второго этажа были *охитун—буркноц*, где находился очаг, *айат* (крытая передняя), *марон* (сарай), *мац ода* (большая жилая комната), или *мисафари ода*, и *суфа* (балкон).